ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-2>>

ք.Երևան «07» մայիսի 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սահակյանշին» ՓԲԸն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Սահակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի **տեխ.բնութագրին**, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2018թ հոկտեմբերի 1-ը ներառյալ:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում **տեխ. բնութագրին և** նախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ տեխ. **բնութագրին և ծավալաթերթին** համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային

ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից **հաշված 30 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված

աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **398 940 000 (երեք հարյուր իննսունութ միլիոն ինն հարյուր քառասուն հազար)** ՀՀ դրամ, որից **66 490 000.0 (վեթսունվեց միլիոն չորս հարյուր իննսուն հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.1.1 Պայմանագրի գնից **79 788 000 (յոթանասունինը միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար)** ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[1]:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[1] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8..15 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«Սահակյանշին» ՓԲԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	ք.Երևան, Արարատյան 117/1
Կենտրոնական գանձապետարան	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900012410099	Հ/Հ 1150000169370100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 02224769
Գ. Չթրյան---------- (ստորագրություն) Կ.Տ	Ա. Սահակյան (ստորագրություն) Կ. Տ

Հավելված թիվ 1
« 07 » մայիսի 2018թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-2 *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ–ՆԱԽԱՀԱՇԻՎ					
Երևան քաղաքի փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ (2-րդ չափաբաժին)					
					հազ. դրամ
Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չ/մ	Քանակ	Միավորի գինը	Ընդամենը
1	**Փողոցների ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգում**				
	Ասֆալտբետոնյա ծածկի տաշում ֆրեզով, բարձում, տեղափոխում թափոնատեղ, ճաքալցում, անհրաժեշտության դեպքում մինչև 10 % հարթեցնող շերտի և խճե հիմքի իրականացում, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտբետոնյա ծածկի տեղադրում 4-5 սմ հաստությամբ ասֆալտատեղադրիչով	քմ	38830	3.7100	144059.3000
2	**Դիտահորերի ծածկի սալի նիշերի ուղղում**				0.0000
	Ասֆալտբետոնյա ծածկի և հիմքի քանդում, բարձում, տեղափոխում թափոնատեղ, հիմքերի և կողային տարածքի բետոնապատում մինչև h=30սմ, ծածկի սալի վերատեղադրում, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի իրականացում $h_{միջ}$ = 5սմ հաստությամբ	հատ	17	82.3270	1399.5590
3	**Անձրևորսիչների նիշերի ուղղում**				0.0000

	Ասֆալտբետոնյա ծածկի և հիմքի քանդում, բարձում, տեղափոխում թափոնատեղ, հիմքերի և կողային տարածքի բետոնապատում մինչև h=15սմ, անձրևորսիչի վերատեղադրում, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի իրականացում $h_{միջ}$ =5սմ հաստությամբ	հատ	8	33.1487	265.1896
4	**Մայթերի և բակային ճանապարհների վերանորոգում**				0.0000
	Մայթերի և բակային ճանապարհների ասֆալտբետոնյա ծածկի քանդում, բարձում, տեղափոխում թափոնատեղ, անհրաժեշտության դեպքում խճի հիմքի իրականացում մինչև 10%, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտբետոնյա ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ	քմ	40000	3.2970	131880.0000
5	**Փոսային նորոգում մինչև 25քմ**				0.0000
	Ասֆալտբետոնյա ծածկի քանդում ֆրեզով, եզրերի մշակում սղոցով և կոմպրեսորով, բարձում, տեղափոխում թափոնատեղ, անհրաժեշտության դեպքում խճե հիմքի իրականացում, մակերեսի մշակում բիտումով, ասֆալտբետոնյա խառնուրդի տեղադրում h=4-5սմ հաստությամբ	քմ	13440	4.0808	54845.9520
	ԸՆԴԱՄԵՆԸ				332450.000
	ԱԱՀ 20%				66490.000
	ԸՆԴԱՄԵՆԸ				398940.0000

Տեխնիկական բնութագիր

1.Նախապատրաստական աշխատանքներ ֆրեզով և կոմպրեսորով,
2.Դիտահորերի և անձրևաորսիչների նիշերի ուղղում՝վերատեղադրմամբ,անհրաժեշտության դեպքում նորի տեղադրումով,
3.Ասֆալտապատման ենթակա մակերեսի մաքրում կեղտից, փոշուց և առաջացած ասֆալտբետոնյա կտորներից, մակերևութի մշակում բիտումային էմուլսիայով, անհրաժեշտության դեպքում խճե հիմքի ուղղում խճով կամ ֆրեզավորված ասֆալտբետոնով, ֆրեզավորված մակերեսում առկա ճաքերի ճաքալցում,
4.Վերոգրյալ աշխատանքների թաքնված աշխատանքների ակտը տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպության և պատվիրատուի կողմից հաստատելուց հետո իրականացնել ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի տեղադրում,
5.Շին աղբի բարձում և տեղափոխում,
6.Շին.աշխատանքների ժամանակ ճանապարհների վերանորոգվող հատվածների փակում և առանձնացում, ինչպես նաև տրանսպորտային հոսքի կարգավորման իրականացում ճանապարհային նշանների տեղադրմամբ կամ վերատեղադրմամբ,

7.Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Երևանի քաղաքապետարանի կողմից տրվող պատվեր-առաջադրանքների հիման վրա:

Տեխնիկական առաջադրանք

1.Աշխատանքներն իրականացնել շինարարական նորմերին և կանոններին համապատասխան,
2.Կապալառուն, պատվեր-առաջադրանքը ստանալուց հետո, պատվիրատուին է ներկայացնում նախատեսված ա/բ խառնուրդի բաղադրության ընտրության արդյունքները:
3.Կապալառուն աշխատանքները սկսելուց առաջ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության և Պատվիրատուի ներկայացուցչի հետ միասին, տեղում ուսումնասիրում է և սխեմատիկ հատակագծի վրա նշում է կատարվելիք աշխատանքների տեղը և ծավալները:
4.Կատարված աշխատանքները ընդունելու համար Կապալառուն ներկայացնում է կատարողական գծագրերը, գործընթացի լուսանկարները, թաքնված աշխատանքների ակտերը, օգտագործված շինարարական նյութերի (ասֆալտբետոնե խառնուրդ,բիտում, բազալտե խիճ, կվարցային ավազ) որակը հավաստող փաստաթղթերը (երկու օրինակից):
5.Ֆրեզով նախապատրաստական աշխատանքների ավարտից հետո ա/բ տաշվածքը տեղափոխել պատվիրատուի կողմից առաջադրված վայրը:

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«Սահակյանշին» ՓԲԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	ք.Երևան, Արարատյան 117/1
Կենտրոնական գանձապետարան	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900012410099	Հ/Հ 1150000169370100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 02224769
Գ. Չթրյան---------- (ստորագրություն)	Ս. Սահակյան---------- (ստորագրություն)
Կ.Տ	Կ. Տ

Հավելված թիվ 2
« 03 » մայիսի 2018թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-2 *ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման» **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	***Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ***	Պայմանագիրը ուժի մտնելու օրը:	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում՝ մինչև 01.10.2018թ
....			
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410099
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«Սահակյանշին» ՓԲԸ
ք.Երևան, Արարատյան 117/1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000169370100
ՀՎՀՀ 02224769

Ս. Սահակյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
« 07 » մայիսի 2018թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
			մարտ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231187	***Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ***	—	230 752 808	230 752 808	372 754 536	372 754 536	372 754 536	398 940 000	398 940 000	398 940 000	398 940 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410099
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«Սահակյանշին» ՓԲԸ
ք.Երևան, Արարատյան 117/1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000169370100
ՀՎՀՀ 02224769

Ս. Սահակյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
« 07 » *մայիսի 2018թ. կնքված*
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-2 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 07 » մայիսի 2018թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/58-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 3240-02

«07» 05 2018

ԵՐԱՇԽԻՔ

Ընդունելով ի գիտություն, որ **Երևանի քաղաքապետարանի** (այսուհետև՝ Բենեֆիցիար) և **«Սահակյանշին» ՓԲԸ-ի** (այսուհետև՝ Պրինցիպալ) միջև թիվ ԵՔ-ԲՄԱՇԱՁԲ-18/58-2 գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր) կնքելու համար Պրինցիպալը պարտավոր է ներկայացնել պայմանագրի կանխավճարի ապահովում **79,788,000 (յոթանասունինը միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ** գումարի չափով (այսուհետև՝ երաշխիքային գումար), «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետև՝ Երաշխավոր) ստանձնում է անվերապահ պարտավորություն հանդես գալ իբրև Պրինցիպալի ու իրավահաջորդների (Ժառանգների) Երաշխավոր և Պրինցիպալի ու իրավահաջորդների (Ժառանգների) հետ համապարտ պարտապան, ի ապահովումն Պրինցիպալի կողմից Պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման:

Պրինցիպալի կողմից Պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, Պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում Երաշխավորը պատավորվում է Բենեֆիցիարի կողմից վճարում իրականացնելու մասին ծանուցումն ստանալու պահից 3 բանկային օրվա ընթացքում վերջինիս վճարել պահանջված գումարը՝ առանց պահանջելու պայմանագրային պարտավորությունները խախտելու հիմնավորում: Նշված ժամկետում վճարումը չիրականացնելու դեպքում Բենեֆիցիարն իրավունք ունի անվիճելի և անառարկելի կարգով վճարման պահանջագրով գանձել համապատասխան գումար, երաշխիքային գումարի սահմաններում, Երաշխավորի ՀՀ Կենտրոնական բանկում կամ Երաշխավորի ցանկացած թղթակից բանկում բացված՝ Երաշխավորի ցանկացած այլ հաշվից:

Սույնով Երաշխավորը հանձնարարում է ՀՀ Կենտրոնական բանկին, ինչպես նաև իր բոլոր թղթակից բանկերին, պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում Բենեֆիցիարի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով Երաշխավորի թղթակցային հաշիվներից անվիճելի կարգով գանձել պահանջվող գումարը:

Սույն երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխավորի կողմից:

Սույն երաշխիքը ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում մինչև **20.12.2018թ.**:

Վարչության Նախագահ Ա. Միքայելյան

Գլխավոր հաշվապահ Ե. Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ.փոստ՝info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл.почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 3241-02

«07» 05 2018

ԵՐԱՇԽԻՔ

Ընդունելով ի գիտություն, որ **Երևանի քաղաքապետարանի** (այսուհետև՝ Բենեֆիցիար) և **«Սահակյանշին» ՓԲԸ-ի** (այսուհետև՝ Պրինցիպալ) միջև թիվ ԵՔ-ԲՄԱՇԱՁԲ-18/58-2 գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր) կնքելու համար Պրինցիպալը պարտավոր է ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում **39,894,000 (երեսունինը միլիոն ութ հարյուր ինսունչորս հազար) ՀՀ դրամ** գումարի չափով (այսուհետև՝ երաշխիքային գումար), «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետև՝ Երաշխավոր) ստանձնում է անվերապահ պարտավորություն հանդես գալ իբրև Պրինցիապալի ու իրավահաջորդների (Ժառանգների) Երաշխավոր և Պրինցիապալի ու իրավահաջորդների (Ժառանգների) հետ համապարտ պարտապան, ի ապահովումն Պրինցիապալի կողմից Պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման:

Պրինցիապալի կողմից Պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, Պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում Երաշխավորը պատավորվում է Բենեֆիցիարի կողմից վճարում իրականացնելու մասին ծանուցումն ստանալու պահից 3 բանկային օրվա ընթացքում վերջինիս վճարել պահանջված գումարը՝ առանց պահանջելու պայմանագրային պարտավորությունները խախտելու հիմնավորում: Նշված ժամկետում վճարումը չիրականացնելու դեպքում Բենեֆիցիարն իրավունք ունի անվիճելի և անառարկելի կարգով վճարման պահանջագրով գանձել համապատասխան գումար, երաշխիքային գումարի սահմաններում, Երաշխավորի ՀՀ Կենտրոնական բանկում կամ Երաշխավորի ցանկացած թղթակից բանկում բացված՝ Երաշխավորի ցանկացած այլ հաշվից:

Սույնով Երաշխավորը հանձնարարում է ՀՀ Կենտրոնական բանկին, ինչպես նաև իր բոլոր թղթակից բանկերին, պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում Բենեֆիցիարի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով Երաշխավորի թղթակցային հաշիվներից անվիճելի կարգով գանձել պահանջվող գումարը:

Սույն երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխավորի կողմից:

Սույն երաշխիքը ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում մինչև **20.12.2019թ.**:

Վարչության Նախագահ Ա. Միքայելյան

Գլխավոր հաշվապահ Ն. Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ.փոստ՝info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл.почта: info@armbusinessbank.am; Вев-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00;